

Քիւ 25894  
Օգոստոս 28, 1977

Մեծայարգ  
Տէր եւ Տիկ. Սեդրակ Քիւթիւնճեան  
Էլպըրոն.

Յարգելի Տէր եւ Տիկ. Ս. Քիւթիւնճեան,

Անգամ մը եւս կը փափաքինք մեր շնորհակալութիւնը յայտ-  
նել Ս. Էջմիածնի մէջ ձեր կողմէ առնուած լուսանկարին համար,  
զոր շրջանակի մէջ դրուած մեզի յանձնեցիք անձնապէս:

Շատ յաջող եւ յիշատակելի լուսանկար մըն է այդ, որ յա-  
մախ մեզի պիտի վերյիշեցնէ այն խանդավառ եւ պատմական պահերը  
զորս ապրեցանք մեր Հոգիւոր Կեդրոնին մէջ:

Կ'աղօթենք որ Տէրը իր հովանին անպակաս ընէ ձեր ընտանե-  
կան յարկին վրայէն եւ բոլորիդ պարգեւէ բաջառողջ ու երկար  
կեանք:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԷՆՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ